# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 10-Ա**

<<15>> փետրվարի 2024 թվական		քաղաք Մարալիկ

## <<<<ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ԴՈՒԲԱՅ 7-ՕՐՅԱ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5-Ա որոշումը և հաշվի առնելով <<<<Հակոբյաններ>> Համահայկական մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահի 2024 թվականի հունվարի 24-ի գրության մեջ ներկայացված չեն համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայության համար հայցվող գումարի չափի հիմնավորվածությունը, իսկ հանրակրթական դպրոցներում խրախուսանքի ենթակա հավակնորդ աշակերտների ընտրությունը կատարվել են ոչ մրցութային և հրապարակային ընթացակարգով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Մերժել <<<<Հակոբյաններ>> Համահայկակն մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ Ս. Հակոբյանի 2024 թվականի հունվարի 24-ի դիմումը՝ Անի համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայությունն ապահովելու համար դրամական հատկացում կատարելու վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԱՆԵՐ**

| | Կողմ-3 | Դեմ – 7 | Ձեռնպահ – 1 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | ------------- | ------------- | [signature] |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ------------- | [signature] | ------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | [signature] | ------------- | ------------- |
| Է. ՈՒՌՈՒՍՅԱՆ | ------------- | [signature] | ------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ------------- | [signature] | ------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ------------- | [signature] | ------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ------------- | [signature] | ------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ------------- | [signature] | ------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | [signature] | ------------- | ------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | [signature] | ------------- | ------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | ------------- | [signature] | ------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<15>> փետրվարի 2024 թ.
քաղաք Մարալիկ